

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն

ՀԱՊԵՀԱՆԳԻՍՏ.

Ամսոյս 2 ին Ս. Էջմիածնի ձեմարանի Գ. լսարանի ուսումնաւարտ ուսանողների խնդրանքը Էջմիածնի միաբանական Ուխտը Հանգուցեալ Տ. Գէորգ Դ. Կաթողիկոսի գերեզմանի վերայ հոգեհանգիստ կատարեց:

Ու Պատարագից յետոյ ձեմարանի աշակերտները (երգեցիկ խումբը ժամաշապիկ հագած) առաջնորդութեամբ ուսումնարանական վարչութեան, եւ Ս. Էջմիածնի միաբանական Ուխտը խաչ խաչվառով թափօր կազմած հանգստեան շարական երգելով եկեղեցուց դուրս եկան եւ խմբուեցին հանգուցեալ Կաթողիկոսի գերեզմանի շուրջը: Հանգստեան պաշտամունքը վերջացաւ Գ. լսարանի ուսումնաւարտ ուսանող Պ. Ստեփաննոս Կանայեանի իւր՝ եւ իւր ընկերակիցների կողմից կարդացած զգացմամբ լի ճառով, որ մեծ տպաւորութիւն գործեց ներկայ եղողների վերայ:

Այդ օրը Ս. Էջմիածնի Վարչութիւնը կարգադրել էր ձեմարանի աշակերտներին եւս Միաբանութեան հետ սեղանակից առնել մի քանի ճաշի: Առաջին անգամն է այդ սեղանակցութիւնը մարանական Ուխտի եւ ձեմարանի հաստատութեան, որի գոթութիւնը մինչեւ ցայսօր բոլորովին անջատ կազմութիւն ունէր: Այդ օրը Էջմիածնի միաբանական Ուխտը զգաց մի սուրբ պարտականութիւն, իւրը համարել ձեմարանական հաստատութիւնը եւ ըստ իւրովսանն կարեաց ջանալ ձեմարանի աւելի բարգաւաճման համար. նոյն զգացմունքը արտայայտւում էր եւ ձեմարանի վարչութիւն կազմող անձանց երեսին: Նոքա եւս զգացին որ մարդիկ կը գան եւ կը գնան, իսկ Էջմիածնի միաբանական Ուխտը աւանդապահ է այն տան՝ որ ազգի կենդրոնն է:

Այո՛, ժամանակ է մի ներքին ներդաշնակութեամբ կապել Էջմիածնի միաբանական Ուխտը ձեմարանական հաստատութեան հետ. այսպիսով առաջինը երկրորդի բարգաւաճման կը-

նպաստէ, իսկ երկրորդը՝ առաջինի փայլը կաւելացնէ: Այդ օրուայ սեղանը անցաւ մի հոգեզմայլ քաղցրութեամբ:

Ճաշի ժամանակ օրուայ պատարագիչ Գեր. Տ. Սերովբէ Սըրբազան Եպիսկոպոսը խօսեց երախտագիտութեան համար, եւ գովեց ճեմարանական հաստատութեան եւ յատկապէս Գ. յարանի ուսումնաւարտ պարոնների պարտաճանաչութեան զգացմունքը, յարատեւ յաջողութիւն մաղթելով ճեմարանական հաստատութեան, եւ յաջողակ գործունէութիւն ուսումնաւարտ պարոններին:

Այդ հոգեշարժ հանգիսի տպաւորութեան տակ, հոգին ու տիրութիւն մոռացնել տալով մարդկային կրքերը, մի տեսակ մտաւոր յափշտակութեան մէջ են դնում մարդուն, եւ միշտ բարի գործ միայն կատարելու պատրաստական գործիք պատրաստում: Այդ տրամադրութեան տակ էին բոլորը:

Վալով ուսումնաւարտ երիտասարդ պարոններին՝ նոցա իւրաքանչիւրի գէմքը արտայայտումէր երախտագիտութիւն: Եթէ այդ ուսումնաւարտ երիտասարդների երախտագիտութիւնը պարփակվումէ միայն հանգուցեալ Հայրապետի գերեզմանի շուրջը, եւ զոչ քան կրքաւականանան միայն զգացմամբ ի ճառերով եւ մինչեւ անգամ հոյակապ մահարձան կանգնելու գործին նախապատճառ դառնալով կատարած համարել իրանց երախտագիտութեան պարտքը՝ — այդ գեռ բոլորը չէ: Իրաւ է, հանգուցեալ Հայրապետը ճեմարանի հաստատութեան սկզբնապատճառը դառնալով՝ բարերար հայր է հանգիսացել ճեմարանական հաստատութեան. համբուրենք բարերար Աջը. սակայն մտածենք թէ որտեղից է աղբերանում կատարուած բարերարութիւնը: Ահա մտածելու խնդիրը: Մտածենք թէ բարերարութիւնը, որ վայելելով զարգացանք մտաւորապէս, բարոյապէս եւ նիւթապէս՝ ի՛նչ անենք որ յարատեւ մնայ այդ բարերարութիւնը եւ արտագրող աղբիւրը մեր եղբայրներին ու զաւակներին եւս պիտոյանալու համար. ահա, մի երկրորդ խնդիր էլ, որ մենք պէտք է ի նկատի ունենանք եւ հարեւանցի ու թեթեւ կերպով չընայենք գործին:

Գ. յարանի ուսումնաւարտ երիտասարդ պարոնների մասին խօսելով, այս է առաջ գալիս՝ որ, նոքա գրեթէ տասն տարի ճեմարանի որդեգիր լինելով վայելել են Ա. Էջմիածնի մայրական

խնամիր. իսկ Էջմիածինը նոցա խնամարկել է այն նպաստներով որ ժողովուրդը Աստուծոյ աւանը նուիրել է իրրեւ տասանորդ իւր վաստակներէ: Ահա թէ երիտասարդ ուսումնաւարտ ուսանողները իրանց բարերար Հօրը երախտագէտ լինելուց յետոյ, էլի ս'ւմ պէտք է երախտագէտ գտնուին:

Բաւական չէ որ մարդս գիտենայ իւր բարերարի երախտիքը, հարկաւոր է գիտենալ նաեւ երախտագիտութեան վճարելիք պարտքը՝ որ պարագաները առաջագրուեն. ուրեմն մնում է յիշել թէ ուսումնաւարտ երիտասարդները ի՞նչ պարտք ունին վճարելու Ս. Էջմիածնին եւ ազգին: Ահա մի երրորդ խնդիր՝ որ կարող է եւ գիւրեւաւ լուծուել եւ անլուծանելի մնալ:

Եթէ ձեմարանի վերջնական նպատակը յայտնի լինէր, եւ որոշ ու պարտաւորական լինէին որդեգրութեան պայմանները, այժմ հարկ չէր լինիլ մտածել յիշեալ ուսումնաւարտ պարոնների մասին: Բայց որ Ս. Էջմիածինն ու ազգը պատասպարել են ազգի զաւակներին, չեն խնայել նիւթական եւ բարոյական հարկաւոր սնունդ առանց կաշկանդիչ պայմանների, հաստատ հաւատալով թէ այդ զաւակները, երբ կըգայ ժամանակը, գիտակցաբար, աւելի քերմ՝ եռանդով եւ յօժարակամ կանեն այն՝ ինչ որ պարտաւորական պայմանները պէտք է տրամադրէին. այժմ մնում է նոյն ինքն ուսումնաւարտ պարոններին մտածել ինչ որ հարկաւոր է: Նոցա համար եկած է ժամանակը, գիտակցութիւնը նոցա պակաս չէ. մնում է նոցա քերմ՝ եռանդով եւ յօժարակամ անել այն՝ որ ոչ թէ պարտաւորական պայմաններն են տրամադրում, այլ ինչ որ իրանց խղճի դատաստանը կըթելադրի. ինչ որ իրանց բանականութիւնը արժան կըգատի:

Նոքա պարտաւոր են ծառայել Ս. Էջմիածնին, ազգին եւ եկեղեցուն. երեքի շահերն էլ միեւնոյն են. զանազանութիւն անելը եւ առաւելութիւն տալը մէկին կամ միւսին՝ առողջ բանականութեան հակառակ է: Երեք ասպարէզ կայ գործելու, — ուսուցչութիւն, քահանայութիւն եւ վարդապետութիւն: Երեք ասպարէզներն էլ ունին աւելի պակաս խորդ ու բորդ եւ փշոտ շրջանակ, ունին աւելի պակաս մխիթարական եւ գոհացուցիչ ընթացք:

Իբրեւ ուսուցիչ՝ նոքա պէտք է աշխատեն մի դպրոցի մէջ մի խումբ մանուկների մօտաւոր զարգացման համար. իբրեւ քա-

Հանայ, նոքա պէտքէ մի քաղաքի կամ գիւղի մէջ աշխատեն իրանց հովուութեան յանձնուած ժողովրդի հոգեկան մխիթարութեան եւ չափահասների բարոյական կրթութեան համար իրրեւ վարդապետ՝ նոքա պէտքէ աշխատեն Մայր Աթոռի եւ ժողովրդեան պայծառութեան համար:

Մեր ազգի այժմեան դրութեան նայելով ոչ մի պաշտօն եւ կոչումն չունի գործելու այն ընդարձակ աստարէզը, որ սեպհական է վարդապետութեան. իսկ ուսումնաւարտ պարոնները այդ կոչումն ընդունելով իրրեւ կրթեալ եւ ուսեալ հոգեւորականներ՝ կը կարողանան ժամանակի պիտոյիցը համեմատ գործել ժողովրդի հոգեւոր շրջանին վերաբերեալ պահանջներին ըստ կարի լրումն տալով:

Ամենայն կոչումն եւ պաշտօն ունին իրանց ձախող հանգամանքը, սակայն մարդս պէտք է ունենայ հոգւոյ արիւթիւնը, եւ միշտ անվհատ ու անյողդողդ մնայ իւր ընտրած կոչման մէջ, համոզուած լինելով որ չրկայ քաղցրութիւն առանց դառնութեան, եւ ոչ դառնութիւն՝ առանց քաղցրութեան. վարդն էլ ունի իւր փուշը:

Ճեմարանի ուսումնաւարտ ուսանողներին ի տրիտուր երախտեաց մնումէ իրրեւ առաջնապետուդ կամ երախայրիք ճեմարանի տասնամեայ երկանց՝ իրանց տպագայ աշակերտակիցներին ըստութեան օրինակ հանդիսանալ. ընտրութիւն անելով իրանց ապագայ գործունէութեան նախալիշատակեալ երեք ասպարէզներում:

Ուրիշ որ եւ է կենցաղավարութեան համար խօսելն անգամ աւելորդ է, թէ այդ ուսումնաւարտները բացի երեք վերոյիշեալ պաշտօններից կրնորեն այլ պարապմունք գործունէութեան: Հասարակաց արդեամբ զարգացածը հասարակութեան պարտական է ծառայել. ուրեմն այդ ուսումնաւարտ պարոններին մնումէ լինել վարժապետ՝ մաքառելով բոլոր դժուարութեանց դէմ ինչ որ բնականաբար դեռ չըկազմակերպուած հասարակական գործի իսկական հետեւանքն է, ընդ նմին միշտ համեստ եւ չարքաշ կեանքին տոկալ. լինել քահանայ՝ իրանց յանձնած հօտի օգտին ջանալ գործունէութեան շատ սահմանափակ շրջան ունենալով. կամ լինել վարդապետ՝ գործելու եւ ըստ

այնմ արժանաւայել դիրք ստանալու ընդարձակ ասպարէզը ի նկատի ունենալով:

Էջմիածինը գործունէութեան այս երեք ասպարէզը առաջարկելով իւր ձեմարանի սաներին՝ ոչինչ պարտաւորական հարկով չէ կաշկանդում նոցա, նոցա վերայ դատաւոր՝ իրանց խիղճը կարգելով, եւ խոստանալով նոցա բարի դիտաւորութեանց միշտ քաջալեր հանգիստանալ, թէ՛ Ս. Էջմիածնում ընդունելով իւր միաբանական Ուխտի շարքում եւ թէ՛ դուրսը՝ իւր արժանաւոր հայ գործիչների կարգում:

Իսկ Արարատի Խմբագրութեան մնումէ յաջողութիւն ցանկանալ յիշեալ պարոններին նոցա բարի մտադրութեանց համար:

ԱՂԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՆՈՐ ՅԱԶՈՐԴ.

Արարատի ընթերցողները պաշտօնական տեղեկութեանց մէջ կը տեսնեն, որ ի տեղի Արժ. Յուսիկ Վարդապետի Ալէքսանդրապօլս Յաջորդ Նշանակուած է Արժ. Սահակ Վարդապետ Բաղդասարեան. ի նկատի ունենալով Արժ. Հօր ուսումնասէր եռանդոտ ժիր եւ գործունեայ՝ ընդնմին եւ ընկերական բնաւորութիւնը, Արարատի Խմբագրութիւնը մեծայոյս է, որ Արժ. Հայրը կը կարողանայ Ալէքսանդրապօլի բազմազբաղ յաջորդութեան գործերին նախանձելի եւ օրինաւոր ընթացք տալ, կը կարողանայ իւր հօտի միջից բառնալով ամենայն տեսակ խառնաշփոթութիւնները, կրկինի արժանաւոր հովիւ, եւ ըստ այնմ գնահատուի թէ՛ իւր ժողովրդից, նոցա համակրութիւնն ու համարումը վայելելով եւ թէ՛ Ս. Էջմիածնից՝ իշխանութեան վստահութեանն արժանանալով:

Յաջողութիւն ենք ցանկանում Արժ. Հօրը: